ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. փետրվարի 27 N 41-Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի N 97 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2021 թվականի մայիսի 17-ի N 97 որոշմամբ հաստատված հավելված 2-ի 1-ին կետի 3-րդ ենթակետի թվագրումը փոփոխել և համարակալել 4-րդ ենթակետով, իսկ նույն կետի 3-րդ ենթակետը լրացնել «Տարհանման հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ» բառերով:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի ոլորտը համակարգող տեղակալին:
3. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Invalid signature

X

VERIFIED OCSP 2/27/2023 16:33:39 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2023թ. փետրվարի 27-ի N 414-Ա որոշման

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2021թ. մայիսի 17-ի N 97 որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Տարհանման հանձնաժողովի ղեկավար կազմ.

1) Տարհանման հանձնաժողովի նախագահ՝ Արագածոտնի մարզպետի տեղակալ.

2) Տարհանման հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Արագածոտնի մարզպետարանի ՏԻ և ՀԳՀՄ հարցերով վարչության պետ.

3) Տարհանման հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ

4) Տարհանման հանձնաժողովի քարտուղար՝ Արագածոտնի մարզպետի տեղակալի օգնական:

2. Տարհանման հանձնաժողովի անդամներ.

1) Կապի ոլորտի ներկայացուցիչներ՝ Արագածոտնի մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի ցանցերի շահագործման թիմի ներկայացուցիչ /համաձայնությամբ/.

2) Հասարակական կարգի պահպանման ոլորտի ներկայացուցիչ՝ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության ներկայացուցիչ.

3) Բժշկական ապահովման ոլորտի ներկայացուցիչ՝ Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ.

4) Ինժեներական և կոմունալ տեխնիկական ապահովման ոլորտի ներկայացուցիչ՝ Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ.

5) Նյութատեխնիկական մատակարարման ապահովման ոլորտի ներկայացուցիչ՝ Արագածոտնի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ.

6) Էներգետիկայի ապահովման ոլորտի ներկայացուցիչ՝ «ՀԷՑ» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաճյուղի Աշտարակի շրջանային էլեկտրոցանցի գլխավոր ճարտարագետ /համաձայնությամբ/.

7) Տրանսպորտային ապահովման ոլորտի ներկայացուցիչ՝ Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ.

8) Առևտրի և սննդի ապահովման ոլորտի ներկայացուցիչ՝ Արագածոտնի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ.

9) Բույսերի և կենդանիների պաշտպանության ապահովման ոլորտի ներկայացուցիչ՝ Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ.

10) Բնակչության հատուկ սպասարկումների ապահովման ոլորտի ներկայացուցիչ՝ Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
գլխավոր քարտուղար

Недействительная подпись

X

ՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ